

**ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ  
ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՆԿԱՐԱԳԻՐԸ**

**ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ս. Ս.**

Կապանի տարածաշրջանի բարբառային միավորների հնչու-  
նահնչության համակարգերը համաժամանակյա ուսումնասիրության չեն  
ենթարկվել: Խնդրո առարկա խոսվածքները ում և (լի)ս ճյուղերի բարբառային  
միավորներ են, որոնք, ունենալով հնչյունական նույն ենթահամակարգերը,  
ենթարկվում են հնչյունափոխական միևնույն օրենքներին: Բարբառների  
հնչույթների քննությունը ներկայումս ընդունված է իրականացնել ոչ միայն  
ընկալողական, այլև փորձարարական-հնչյունական մեթոդներով, որոնք ոչ  
թե «մեկ, այլ մեթոդների ամբողջ շարք»<sup>1</sup> են:

Համաժամանակյա (սինխրոն) քննության ժամանակ համեմատության եզր  
են ընդունում արդի հայերենի սլյալ իրողությունը, իսկ պատմական  
ուսումնասիրության դեպքում՝ գրառված հնագույն տարբերակը,  
մասնավորապես՝ գրաբարյան: Ներկայումս Կապանի տարածաշրջանի խոս-  
վածքներն ունեն և գրական հայերենին, և՛ բարբառներին բնորոշ հնչյուններ,  
սակայն տարածամասնակյա կտրվածքում, Ա. Ղարիբյանի առաջադրած  
հնչյունաբանական սկզբունքի համաձայն, Ղարաբաղի բարբառը և նրա  
կազմում Կապանի խոսվածքը ենթարկվում են բաղաձայնական համակարգի  
առաջին տեղաշարժին, այսինքն՝ երկաստիճան ձայնեղագուրկ, քանի որ,  
բառասկզբի ձայնեղները դառնում են խուլեր՝ **բ>պ, գ>կ, դ>տ, ձ>ձ, ջ>ճ** (օր.  
**բոբիկ> պէպէճ, գիրք>կիր(ք), դուռն> տուռ (ն) ը/տո՛ւ ո(ն)ը, ձայն>ձէն,  
ջուր>ճո՛ւ ր**): Միջինհայերենյան ժամանակաշրջանում տարբեր բարբառային  
միավորներում ձայնեղ հպականների և կիսաշփականների իյացման օրենքը  
չի գործել, ուստի միջին դարերից (մասնավորապես X-XIV դդ.) ավանդված  
փոխառությունները պահպանել են բառասկզբի ձայնեղները: Հետևաբար  
բառասկզբը ձայնեղների համար այլևս բացառված դիրք չէ: Հետազոտության  
առարկա խոսվածքներում գործառում են նաև քմային **գ, կ, ք** բաղաձայններ:  
Մյունիք-Արցախ տարածքի բարբառային միավորների հետնալեզվային  
ձայնավորների քմային տարբերակները՝ **ւ, օ, ու**, գործառության  
սկզբնական շրջանում հնչության արժեք չունեին, այլ «a, o, u ձայնավոր  
հնչույթների դիրքային տարբերակներն էին»<sup>2</sup>: Տվյալ հնչյունի դիրքային տար-  
բերակներն էլ նպաստում են լծորդական շարքերի առաջացմանը՝ միևնույն  
ձայնավորի կոշտ կամ բաց և փափուկ կամ փակ հակադրությամբ՝ **ւ** -ա-**ւ**,

<sup>1</sup> Зиндер Л. П. *Общая фонетика*, М., 1979, с. 20.

<sup>2</sup> Մուրադյան Հ. Ղ., *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1982, էջ 56:

օ-օ-օ, է-է-է, ը-ը-ը, ու-ու, ի-ի-ի<sup>3</sup>, ինչպես՝ *յա/ա տ, հօ՛ չ, կօրէ՛, ճի՛/ի չ՛/ի չ՛, մէ ծ, >հը նդէլ, պիլւնի*: Չայնավորների այս հնկադրությունն ընթանում է > շարքի ու բարձրացման աստիճանի փոփոխմամբ: Հարկ է նշել, որ «հնչույթի տարբերակներից կարող են ծնվել ինքնուրույն հնչույթներ»<sup>4</sup> միատեսակ հնչյունական միջավայրում լինելով իմաստագատիչ, օր.՝ *տււ* և «դաս» - տաս «10 թվանշան», կօ/օ դ «կող»-կօ դ «գող», կում«կում»-կում «գում»: Համաժամանակյա մոտեցմամբ հնչույթային արժևորմանը նպաստում է մի դեպքում Աճառյանի օրենքը, մյուս դեպքում՝ այդ օրենքին նախորդող շրջափուլը՝ ոչ ձայնեղ հնչյունների մոտ ձայնավորի քմայնացմամբ: Ինչպես Արցախի, Մյունիքի, Բուրդուրի բարբառային որոշ միավորներում, այնպես էլ Կապանի տարածաշրջանի խոսվածքներում Աճառյանի օրենքի գործառնությամբ զարգացել է ա>ւ>է հաջորդական անցումը, այսինքն՝ գործել է նշված հնչյունական իրողությունը՝ օերորդ շրջանով<sup>5</sup>, օր.՝ *բան>պւն* և (Գոր., Միս.), *բէն/պէն* (Մեղ., Կաք., Կարճ.), *պէն* (Կապ.), *բահ>պւհ* (Բ.Բ., Աղ., Տ.)//*պէհ(ի)* (Կապ.), *բարձ>պւրց*(Գոր.)//*պէրց*(Կապ.), *դանակ>տւն* և *ւն* կ(Գոր.)// *տէնակ* (Կապ.) և այլն: Մյունիք-Արցախ տարածքի բարբառային միավորներին բնորոշ և գործող աճառյանական օրենքը բառասկզբի ձայնեղների իլացմամբ կանգ է առել, որը վկայում են գրական և այլ լեզուներից կատարված փոխառությունները: Այս օրենքին հավանաբար մ.թ.ա. VII-V դարերում հաջորդել է հպական և կիսաշփական ձայնեղների շնչեղ իլացումը բառամիջում և բառավերջում<sup>6</sup>:

Կապանի տարածաշրջանի խոսվածքներում արդի ժամանակա-փուլում գործուն են նաև ձայնավորների քմայնացումը, կոշտ կամ բաց արտաբերումը, ձայնավորների ներդաշնակությունը: Սակայն տարածամանակյա (դիախորոնիկ) մոտեցմամբ «ձայնավորների քմայնացումը ժամանակագրորեն նախորդել է ձայնեղ պայթականների իլացմանը»<sup>7</sup>, իսկ վերոնշյալ օրենքի տարածմամբ հետնալեզվային ձայնավորների առաջնային փակ արտասանությունն ընդհանրական բնույթ է ստանում ոչ միայն այդ հնչյունական օրենքի գործառնության սահմաններում, այլև գ, ժ ձայնեղներից, խուլերից և լ ձայնորդից հետո: Քմայնացումը խնդրո առարկա խոսվածքներում այնքան արտահայտված է եղել, որ նպաստել է ձայնավորների առաջնթաց և հետնթաց ներդաշնակությանը: Քմային ձայնավորների գործածությունը որոշ բառաշերտերում պայմանավորված է ն՛ ներքին (Աճառյանի օրենք, ձայնավորների ներդաշնակություն), և՛ արտաքին (փոխառություններ) հնչյունական երևույթներով, իսկ կոշտ ձայնավորները առկա են բառի շեշտյալ վանկում՝ վերջընթեր շեշտի ներգործությամբ (օր. *ա/ ա մբար, լէ ն, մըր, կօ ոնր*): Կոշտ կամ բաց արտասանությամբ ձայնավորները նվազում են նաև բաղաձայնների բնույթի վրա, ուստի «9-րդ

<sup>3</sup> Աղաբեկյան Մ., Մյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն (Հայերենի բարբառագիտական ատլաս, ուսումնասիրություններ և նյութեր, պ.3, Ե., 2010, էջ 69):

<sup>4</sup> Чикобава А. С. Введение в языкознание, ч. I, М., 1953, с. 173.

<sup>5</sup> Միքայելյան Ժ., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները: Համաժամանակյա և տարածամանակյա քննություն, Ե., 2009, էջ 65:

<sup>6</sup> Աղաբեկյան Մ., նշվ. աշխ., էջ 159:

<sup>7</sup> Մուրադյան Հ. Դ., նշվ. աշխ., էջ 92:

դարի սկզբներին՝ «Աղվանքի սահմանակից հայոց մեջ»՝ այսինքն՝ Սյունիք-Արցախ տարածքում<sup>8</sup>, տարբերակել են փափուկ ու կոշտ լ, իսկ վերջինից էլ զարգացել է դ-ն, հետևաբար «նախկին ձայնեղներից և փափուկ լ-ից հետո ձայնավորները մեծ մասամբ ձգտել են ավելի փակ, առաջնային, իսկ պարզ և շնչեղ խուլներից, ձայնորդներից հետո՝ շեշտյալ դիրքում, ավելի բաց, հետին արտաբերության: Դա Սյունիք-Արցախ տարածքի ձայնավորների դիրքային բաշխվածության հիմնական օրենքն է»<sup>9</sup>: Տեղին է նշել, որ պատմականորեն հնչյունական այս իրողությունը հաջորդել է աճառյանական օրենքին, ուստի այն պետք է սկիզբ առներ դեռևս II-III դարերից:

Հավանական է, որ V դարում Սյունիքը և Արցախը համարվել են առանձին բարբառային միավորներ: Միջին հայերենում քննվող խոսվածքների երկբարբառները, պատմական հնչյունափոխության համաձայն, վերածվել են պարզ հնչյունների կամ էլ ժրանց քմային տարբերակների, ինչպես՝ այ>ա>է (փայտ>փաղ//փեղ, հայր> հար//հէր), ոյ>ու>օ՛ւ (քոյր>քուր//քօ՛ւ ր, ոյժ>ուժ//օժ, թոյլ>թօ՛ւ լ), եւ//իւ>ու>օ՛ւ (աղբեր//աղբիր>օ՛ւ հայօ՛ւ ր, լիւր>օ՛ւ լիւ ր//օ՛ւ լ էր, լայնութիւն>լէնօթուն): Երկբարբառների պարզեցումն առհասարակ ընթացել է կամ շրթնային բաղադրիչի գերակայությամբ, կամ բարձրացման փոփոխությամբ:

Կապանի տարածաշրջանի խոսվածքներում ևս բաղաձայն հնչյունների համար կան ուժեղ դիրքեր, որոնցում բաղաձայնները քիչ են ազդեցություն կրում նախորդ կամ հաջորդ հնչյուններից՝ իրենց տարբերակիչ հատկանիշները դրսևորելու համար: Իբրև այդպիսին համարում են բառասկիզբը և միջձայնավորային դիրքերը (օր. գ ի դօ՛ւ, կ օ՛ւ րօ՛ւ նք և այլն): Առանձնացնում են նաև թույլ դիրքեր, որոնցում այլ հնչյունի առկայությամբ բաղաձայնը կորցնելով իր տարբերակիչ հատկանիշներից որևէ մեկը, կարող է համընկնել մեկ այլ հնչյունի հետ: Հպական և կիսաշփական ձայնեղների համար բնիկ բառերում ր-ից և դ-ից հետո թույլ դիրք է<sup>10</sup>:

Համաժամանակյա մոտեցմամբ բառասկիզբը բացառված դիրք է միայն ր ձայնորդի համար, սակայն իբրև բացառություններ առանձնացրել ենք (ը)րա՝ «արա», (ը)րախա «երեխա» բառաձևերը, որոնք ունեն նախահար ը: Կարծում ենք, որ նախահար ձայնավորի թույլ արտասանության և անկման հետևանքով նաև փոխատու և գրական լեզուների ազդեցությամբ դ-ն և ո-ն ևս գործառում են բառասկզբում, այսպես՝ (ը)դողել «ողողել», ուռուս//ըռուս, դրզղան «կաթսա» և այլն:

Հնչյունական համակարգերի փոփոխությունները հիմնականում առնչվում են լեզվի ներքին զարգացման օրինաչափություններին և արտաքին փոխազդեցական երևույթներին: Հետազոտության առարկա բարբառային միավորների հնչյունական մի շարք երևույթներ առնչվում են վերջընթեր շեշտին և պայմանավորված են նրանով, քանի որ այն պահպանել է հնդեվրոպական հիմք լեզվի լոռնիկ շեշտի ուժգնությունը, ինչպես լի՛ւ սօ՛ւ նօ՛ւ, դա րկէլ, հրվա քէլ, կ օ՛ւ պի՛ւ տ և այլն: Շեշտից առաջ գտնվող

<sup>8</sup> Աղաբեկյան Մ., նշվ. աշխ., էջ 147:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 79-80:

<sup>10</sup> Խաչատրյան Ա. Հ., Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, էջ 100-101:

ձայնավորները հնչյունափոխվում են ը-ի կամ աղվում, քանի որ ինչպես նշում է Յու. Ստեպանովը, անշեշտ վիճակը թույլ դիրք է ձայնավորների համար<sup>11</sup>: Լեզվական այդ իրողությունը «ընդգծված կերպով արտահայտված է Ղարաբաղի, Զանգեզուրի տարածքում գտնվող բարբառներում»<sup>12</sup>, ինչպես՝  
 աւելուկ>վ՛ոլ շ՛ոլ կ,                      ածելի>ծի շ՛ի,                      գարմանալ>(գ)ըրմա նալ,  
 անկանել>ընգնէ շ՛,    ողորմի>ղորմի և աղն։>Ժամանակագրորեն շեշտանախորդ դիրքի ձայնավորի աղումը կամ ը-ի վերածվելու հնչյունափոխական երևույթը սերում է դեռևս XI դարից, իսկ բառասկզբի ձայնավորների նմանատիպ անկումը արձանագրվել է XII-XIII դարերից<sup>13</sup>: Ինչպես կարծում են, Ղարաբաղի բարբառում և տարածաշրջանիս բարբառային միավորներում արձանագրված անհնչյունափոխ հնագույն բառաձևերը (պէրցո՛ւ ք, փօքուր, վէսկէն/վըսկէն, ծօնգուն, ծոկուն, հէրու, մօկուն, սօնգուն) փաստում են, որ վերջընթեր շեշտը գործառվել է մ.թ.ա. III դարի վերջերիս<sup>14</sup>, որի ուժեղ ներգործությունն էլ նպաստել է, որ V դարում վերոնշյալ բառերը, բացառությամբ հերու բառի, դարձել են մեկուկես վանկանի՝ անշեշտ ձայնավորի սղմամբ, որին էլ միջնադարում հաջորդել է վերջնահանգ ն-ի անկումը: Այդ ձևերը պահպանվել են ինչպես գրական լեզվում, այնպես էլ գրաբարյան ժամանակաշրջանում ձևավորված բարբառներում:

Հնչյունական փոփոխությունները և հնչյունական օրենքներն ընթացել են անհամաչափ, տարբեր ժամանակահատվածներում, ընդ որում հնչյունափոխական որևէ երևույթ, ընդհանրական բնույթ ունենալով, վերածվել է հնչյունական օրենքի: Հայտնի է, որ հնչյունական օրենքը գործել է որոշակի ժամանակահատվածում և սահմանափակ տարածքում, որից հետո այն աստիճանաբար թուլացել է՝ մեկ այլ օրենքի գերակայությամբ: Հնչյունական օրենքների գործառության պայմաններում առաջացել են հնչյունական համապատասխանություններ:

Քննվող բարբառային միավորներին բնորոշ փոխազդեցական հնչյունափոխության մի քանի երևույթներ ավանդվել են հիմնականում միջինհայերենյան շրջանափուլից: Մակայն հնչյունափոխական երևույթներից հ-ի հավելումը ձայնավորասկիզբ մի խումբ բառերում ծագել է նախագրաբարյան (օր.՝ ալեւոր>հի շի վէր, երդ>հէրթ, ուլ>հօլ) և գրաբարյան (անդ>հանդ, ափ>հափուռ, եռալ>հէռալ/հրռալ ուղի>հրդէ(ցէ)) շրջաններից, որոնց նախաձևերը բարբառային հ-ին համապատասխանող հնչյուն չունեին գրաբարում: Հնչյունական նմանաբնույթ ձևերը համարում են հնաբանություններ: Հավելվել են նաև ն, ք, դ, բ, կ հնչյունները, որոնցից ավելի ընդգրկուն է ն-ի հավելումը բառամիջում և բառավերջում, ընդ որում բառամիջում հավելյալական հնչյուն ունեցող որոշ բառեր վկայվել են XII դարում<sup>15</sup>, օր.՝ սանր>սանդրր, համրել>հրմբարէլ, ոզնի>կօզնի և այլն: Մակայն հավանական է, որ ն-ի հավելումը բառավերջում զարգացել է նաև հետագա դարերում, որը վկայում են հին հայերենում առանց ն-ի ավանդված բառերը, որոնք Մյունիք-Արցախ տարածքի բարբառային միավորներում ունեն

<sup>11</sup> Степанов Ю. С. Основы языкознания, М., 1966, с. 11.  
<sup>12</sup> Մուրադյան Հ. Դ., նշվ. աշխ., էջ 89:  
<sup>13</sup> Նույն տեղում, էջ 89-91:  
<sup>14</sup> Աղաբեկյան Մ., նշվ. աշխ., էջ 93:  
<sup>15</sup> Մուրադյան Հ. Դ., նշվ. աշխ., էջ 329:

վերջնահանգ և (ածուխ>անձուղնր, բորբոս> փուփոսնր//փրրփոսնր, թրթուր>թրթոսնր, խուրձ>խօր՞նր//խօր՞նր): Հավելմանը նախորդել է հնչյունների անկումը: Հետաքրքրական է, որ հենց միջինհայերենյան ժամանակաշրջանում՝ մասնավորապես XI դարում<sup>16</sup>, ակտիվացել են նաև հնչյունների անկման և վանկերի հապավման երևույթները, օր.՝ դուրս>տ՞նլ ս, պատճառ>պաճառ, ահաւասիկ> հրսէ, հացահան>ծրհան այլն: Հնչյունների անկումը նկատելի էր դեռևս V-VI դարերում<sup>17</sup>, բառավերջի ձայնավորահաջորդ յ-ի անկմամբ:

Հնչյունափոխական մի շարք երևույթներ՝ դրափոխությունը, պարզ հնչյունի բարդացումը և բարդի տարրալուծումն ու պարզեցումը, կրկնությունը կամ հնչյունի տևական արտասանությունը, պայմանավորված են լեզվի զարգացման պատմական ընթացքով և կիրառություն ունեն հարյուրիսկ XI-XVI դարերում<sup>18</sup>:

Այսպիսով, Կապանի տարածաշրջանի խոսվածքների ձայնավորային և բաղաձայնական ենթահամակարգերի փոփոխություններն ընթանում են համաժամանակյա և տարածամանակյա կտրվածքներով՝ որևէ հնչյունական օրենքի գերակայությամբ: Հնչյունափոխական վերոնշյալ երևույթները և հնչյունական հիմնական օրենքները, որոնք արդի ժամանակավիություն բնորոշ են Կապանի տարածաշրջանի խոսվածքներին, եկել են վաղնջականությունից, ուստի «Մյունիք-Արցախ տարածքի բարբառների հիմքում ընկած բարբառային միավորը՝ որպես այդպիսին, ձևավորվել է հայերենի նախագրային շրջանում՝ մ.թ.ա. առաջին հազարամյակի կեսերից ոչ ուշ»<sup>19</sup>: Քննվող բարբառային միավորները կրում են ներթափանցումներ և փոխազդեցություններ՝ պայմանավորված բարբառակիրների շփմամբ և տարիներ շարունակ միևնույն տեղանքում բնակվելով:

## ОБЩЕЕ ОПИСАНИЕ ФОНЕТИЧЕСКИХ РЕАЛИЙ В ГОВОРАХ КАПАНСКОГО РЕГИОНА

МАНУЧАРЯН С. С

Резюме

Рассматриваемые говоры представляют собой диалектные единицы ветвей “-ум” и “(ли) с”. Н, бные гласные и ударение на последнем слоге, бытовавшие в языке ещ, с конца III в. до н. э., а также “Закон Ачаряна”, характерный для регионов Сюник и Арцах начиная со II-III

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 333:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 330:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 339:

<sup>19</sup> Աղաբեկյան Մ., նշվ. աշխ., էջ 160:

вв., – это те языковые реалии, которые существовали еще, в до-письменный период. При этом следует отметить, что фонетические изменения происходят нерегулярно.

## **GENERAL DESCRIPTION OF PHONETIC REALIA IN KAPAN DIALECTS**

**S. MANUCHARYAN**

Abstract

Kapan dialects are considered to be dialectical units of the branches **Um** and **(L)S**. The historical study of the sound system has revealed that some linguistic realia, namely the palatal vowels and the tonic stress on the last syllable, existed back in the pre-writing period.

It is worth motioning that phonetic changes have irregular occurrence.